



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅ-ՍՈՎԵՏԱՆԻ
ԱԳՐՈՏԵԽՊՐՈՊ ՅԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԵԿՏՈՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

636

Հ-25

ԳՅՈՒՂՀՐԱՏ

1934

ՅԵՐԵՎԱՆ

35-1
62910

636

2-25

30 JUL 2010

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Հ Բ Ա Հ Ա Ն Գ

ՏԱՎԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԱԴՐԱՆԲԱՅԻՆ ԳԵՐՄԱՆԵՐԸ
ՁՄԵՌԵԼՈՒՆ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՅԵՎ ԱՆԱՍՈՒՆ-
ՆԵՐԻ ՄՍՈՒՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԽՆԱՄԲԻ ՄԱՍԻՆ

ԳԵՌԻՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Խ Ե Ղ Ա Ն

1932

0100 JUL 0 2



60775-67

Գրադ. խմբագիր՝ Ս. Իսախանյան

Թարգմ. Գ. Սարգսյան

Պրակտիկ. և. Այվազյան

Հանձնվել է արտադրության 1934 թ. սեպտեմբ. 29-ին:

Պատրաստվել է ապրիլ. 1934 թ. հոկտեմբերի 5-ին:

Թույլատրված է. գլուխի լրացում № 297

Հրատ. № 571, Կիև. 2000, Գաղար. № 571

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂԱՐԱՅԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԳՅԱՆ 50

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՅԵՂԱՐԱՐԱԴԻՄԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԸ ՁՄԵ-
ԹԵԼՈՒՆ ՆԱԽԱՂԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՅԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ՄՍՈՒՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԽՆԱՄԲԻ ՄԱՍԻՆ

1.

Յուրաքանչյուր կոլխոզ-ապրանքային ֆերմա պետք է կազմի և ունենա անասունների ձմեռային պահպանման և կերակրման նախապատրաստական աշխատանքների ծրագիրը և սահմանի ձմեռային պահպանման, խնամքի և կերակրման կանոնները:

1. Յեղնելով ֆերմայի համալրման (կոմպլեկտավորման) և կովերի ծինի ընդհանուր պլանից, նաև անասունների շարժման պլանից, պետք է ճիշտ կերպով հաշվել, թե յուրաքանչյուր առանձին ամսում քանի գլուխ և ինչ հասակի անասուններ կլինեն ֆերմայում:

2. Պետք է ստուգել՝ ապահովվում են արդյոք ֆերմայի գոմերը և այլ ոժանդակ շենքերը ձմեռվա ժամանակամիջոցի համար պլանով նախատեսված անասունների քանակի նորմալ պահպանումը և միաժամանակ վորոշել, թե լրացուցիչ քանի նոր անասնատեղ պետք է կահավորել և ինչպիսի վերանորոգումներ ու բարենորոգումներ կատարել:

3. Յեղնելով ֆերմայի անասունների քանակից և արտադրական առաջադրանքներից, պետք է հաշվել, թե ամբողջ մսուրային շրջանի համար վորքան և ինչպիսի կեբեր են պահանջվում և դրա հիման վրա էլ պետք է կազմել կերի օգտագործման որացուցային պլան:

4. Բեռնվածութեան նորմաների համաձայն պետք է հաշվել շանուժի պահանջը՝ բրիգադը լրացնելու համար։ Անասունների վորոշ մասի խոտանման, փոքրահասակ խոմբերից մեծահասակներին փոխանցվելուն և արատայինից մսուրային խնամքին անցնելու կապակցութեամբ, պետք է անասունների հոտը վերաբաշխել բրիգադի կազմի կողմը տեսականների միջև և այդպիսիններն ամբաստել նրանց մինչև մսուրային շրջանի վերջը։

5. Ֆերմայի նախադատարաստման պլանը և մսուրային շրջանում անասունների պահպանման կանոնները պետք է քննութեան առնել արտադրական խորհրդակցութեանը և հաստատել կոլխոզի վարչութեան կողմից։

II. ՇԵՆՔԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Յեթե ձմեռվա ժամանակամիջոցի համար ֆերմայի պլանով նախատեսված նախիրն ունեցած գոմերով և հորթթանոցներով չի ապահովվում, անհրաժեշտ է շտապ կերպով լրացուցիչ նոր շենքեր կառուցել, կոլխոզի ունեցած ազատ շենքերից հարմարեցնել և կահավորել այդ նպատակի համար։

2. Պետք է ստուգել ունեցած բոլոր գոմերի զրուծյունը և մինչև տավարի մսուրային խնամքին անցնելը, ավարտել նրանց վերանորոգումները։

3. Պետք է բոլոր միջոցները ձեռք առնել ապագային լուր բոլոր գոմերը, հորթթանոցները, ինչպես նաև ֆերմայի մնացած այլ շենքերը. պետք է լուսամուտներին ապակի դրել, ընդհուպ ծածկվող դռներ պատրաստել, պատերը սփաղել. առաստաղի և կտուրի ճեղքներն ու ծակերը բռնել, և յեթե հարկ կա, հողի նոր շերտ քաշել։

Հորթթանոցում և ծննդարանի բաժանմունքում ոգի շերմությունը (հատակի մակերեսին) պետք է լինի 12°-ից փոշ ցածր և 15°-ից փոշ բարձր—ըստ Յելսիուսի, հասա-

կավոր և մատղալ անասունների համար՝ փոշ պակաս 7—8° Յելսիուսի։

Պետք է ստուգել աղափոխ խողովակների զրուծյունը և նրանց աշխատանքը. փոշ սարքի լինելու դեպքում վերանորոգել։

4. Ըստ հնարավորութեան գոմերը պետք է ապահովել՝

ա) կովերի, յերինջների և ցուլերի համար անհատական մսուրներով և կապերով։

բ) Մեկ տարեկանից բարձր մատղաշների խմբակային կերակրման, ինչպես նաև բաժան համար առանձնացված անասունների համար—խմբակային մսուրներով։

գ) Համաձայն կովերի ծինի պլանի՝ հորթթանոցները պետք է ապահովել խմբակային և անհատական վանդակներով։

5. Ամբողջ որվա համար պահանջվող ջրի քանակի համապատասխան ջրամբար պետք է պատրաստել, փորվիսին ընդհուպ փակվող կափարիչ պետք է ունենա, փորպետղի դուրը շիացում տեղի չունենա և դրանով չխոնավանա շենքը։ Ջրամբարը պետք է տեղավորել կերի նախադատարաստման բաժանմունքում։

6. Պետք է վերանորոգման յենթարկել կերի նախադատարաստման բաժանմունքը, ապահովելով այն կոպիտ կերերը շոգեխաչ անելու և արմատադադնները լվանալու համար անհրաժեշտ ամաններով, ինչպես նաև կաթը և ջուրը յեռացնելու-տաքացնելու համար վառարաններով։

7. Գոմերում և հորթթանոցներում անպատճառ ջերմաչափ պետք է ունենալ։

8. Գրանցումների համար յուրաքանչյուր տավարի մսուրի վերևը պատին խփած առխտակ պետք է ունենալ։

9. Ծղնոտահատ և հատիկ մանրացնող մեքենաները պետք է վերանորոգման յենթարկել և աշխատելու համար նրանց տեղավորել կերի նախադատարաստման շենքին կից ծածկոցի տակ։

10. Կաթի ընդունման համար պետք է հատուկ վայր առանձնացնել և համապատասխան կերպով ել կահավորել այն:

11. Պետք է ստուգել գույքի (գուլլեր, բահեր, յեղաններ, կաթնամաններ և այլն) դրությունը, վերանորոգման յենթականները՝ վերանորոգել, պահպանել լրացնել:

12. Գոմերը և հատկապես հորթանոցները պետք է հիմնական մաքրման յենթարկել:

ա) գոմերը պետք է մաքրել գոմաղբից, փոշուց, կեղերի մնացորդներից և ամեն տեսակի կեղտերից: Ստուգել և հարկ յեղած գեպը ու մաքրել ու սարքի գցել միզատար խողովակները:

բ) գոմերը և հորթանոցները՝ մաքրելուց հետո, ախտահանման պետք է յենթարկել: պետք է կարբոլյան թթվի լուծույթով (1 գուլլ ջրին 600 գրամ) սրսկել պատերը, հատակը և այլն. թարմ հանդցրած կրի խառնուրդով (1 գուլլ ջրին 2—3 կիլոգրամ հանդցրած կիր) պետք է սպիտակեցնել պատերը և հորթանոցների վանդակների սրտաքին մասերը:

գ) խոնավության վերացման և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու նպատակով—այն հորթանոցներում, ուր տախտակամած հատակի և գետնի միջև տարածություն կա, պետք է հատակը բացել, գետնի վերին շերտը վերացնել, փորից հետո գետնի շերտը չհանդցրած կրի լուծույթով կամ կարբոլյան թթվով: Գետնի մակերեսի վրա կավի ամրացրած շերտ պետք է պատրաստել և նրա վրա ընդհուպ փակցնելով տախտակամած հատակ պատրաստել: Միզատար խողովակներ պետք է պատրաստել՝ գուրս բերելով նրանք գետնի միզամբարը:

դ) սրահների կառուցմամբ և նրանց նորոգմամբ ու արտաքին լիցքերով պետք է տաքացնել հորթանոցները:

ե) պետք է ստուգել հորթանոցներում յեղած փառարանները և սարքի գցել նրանց:

13. Գոմերի և հորթանոցների շրջապատում յեղած հողամասերում պետք է կիրառել բոլոր միջոցառումները, մորպեպի նա բավարարի բոլոր տեսակի սոսխտարական պահանջներին: Պետք է նախորոշել դեղերի և ընդհանրապես կոպիտ կերերի տեղը, հավասարեցնել այն, շրջապատով առվակներ անցկացնել և ցանկապատել:

14. Գոմերի աղբը պետք է յուրաքանչյուր որ փոխադրել գոմաղբի պահպանման համար նախատեսված վայրը:

15. Պետք է մաքրել միզատար խողովակները, հորերը և միզընդունարանները:

16. Այն գոմերը, փորոնք միզամբարներ չունեն, այդպիսիները պետք է կահավորվեն մինչև մուրային շրջանի սկզբից: Միզամբարները պետք է գոմերից դուրս պատրաստել:

17. Անասունների ձմեռային դրսանքի համար, հենց անմիջապես գոմերին և հորթանոցներին կից, ցանկապատած զրոսավայր պետք է պատրաստել: Զրոսավայրի մատակերպում պետք է խնամքով մաքրել, խորդուբորդությունները հարթել և քամու հոսանքի կողմից պատվար պատրաստել:

18. Գոմերի վերանորոգումը, հարմարեցումները, շենքերի տաքացնելը, մաքրելը և ախտահանումը պետք է ամառի վերջից սկսված անասունների մուրային խնամքին փարտել վոչ ուշ քան անասունների մուրային խնամքին անցնելուց քսան որ առաջ: Նախքան անասուններին մուրային կապելը, շենքերը պետք է լավ չորացած լինեն:

19. Այն շենքերը, փորոնք անասուններին կապելու համար արդեն պատրաստ են, պետք է կոլխոզվարչության կողմից առանձնացված հանձնաժողովին ընդունել: հանձնաժողովի կազմի մեջ պետք է լինեն՝ ֆերմայի վարիչը, արիզագիրը և գոտախնիկը:

III. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒՊԱՏԵԱԸ, ՆԱԽԻ ԽՈՏԱՆՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՏԵՂԱՎՈՐՈՒՄԸ ՄՍՈՒՐԱՅԻՆ ԽՆԱՄԲԻ ՀԱՍԱՐ

1. Մինչ մասերային խնամքին անցնելը, անպատճառ անասուններին վետ-զոոտեխնիկական ստուգման պետք է յենթարկել և նրանց կենդանի քաշը վորոշել: Այդ նպատակի համար կոլտնտեսության վարչությունը, զոոտեխնիկի կամ տեխնիկ անասնապահի, անասնաբուծի կամ անասնաբուծակի, ֆերմայի վարիչի և կոլտնտեսության վարչության մեկ անդամի մասնակցությամբ, հանձնաժողով է առանձնացնում:

2. Հանձնաժողովը պետք է կատարի անասունների խոտանումը: Անասունների խոտանումը պետք է հատարել՝ համաձայնեցնելով ա) ֆերմայի նախրի վերաբրտադրման պլանի, բ) պետության հանձնվելիք մսի պարտավորությունների, գ) կովազուրկ կոլտնտեսականներին հանձնվելիք հորթերի, դ) պետության հանձնվելիք մսի պարտավորության, ե) լծկան անասունների աճեցման և զ) արտադրող ցուլիկի պահանջի ու համալրման պլանների հետ:

3. Անասունների ստուգատեսը կատարելուց հետո, ֆերմայի նախրի գրության մասին պետք է արձանագրության կազմել. արձանագրության պետք է կցել անասունների ցուցակը, վորպիսին պետք է կազմված լինի բոլոր նրանց համարների: Ցուցակում պետք է ցույց տալ յուրաքանչյուր անասունի կենդանի քաշը, նրա գիրության չափը և միաժամանակ նշանակել՝ թողնվում է տրվյալ անասունը ֆերմայում, թե ներկա մասերային շրջանում յենթակա յե խոտանման և ինչպես պետք է վարվել այդ խոտանված անասունի հետ (յենթակա յե բուժման, արվելու յե կոլտնտեսականներին, հանձնվելու յե մասմթերման, վաճառվելու յե կոլտնտնողականում և այլն):

4. Բարձր արտադրողականության և սոհմական ա-

նասուններից խոտանման պետք է յենթարկել միայն նրանց, վորոնք բացահայտորեն անպետք են հետագա տոհմային և արտադրական գործունեության համար, յերբ անասունը հիվանդ է անբուժելի հիվանդությամբ և այդ հիվանդությունը վտանգում է նրա գոյությունը:

5. Պետք է ստուգել բոլոր հորթերը և մատղաներն ու համաձայն շրջանային կազմակերպությունների կողմից հաստատած՝ արտադրական և ֆերմայի նախրի համալրման պլանների, առանձնացնել այն բոլոր պիտանի անասունները, վորոնք անհրաժեշտ են՝

ա) ֆերմայի նախրի վերականգնման համար.

բ) լծկան անասունների աճեցման համար.

գ) կոլտնտեսականների անհատական ոգտագործման հանձնելու համար.

դ) վաճառքի՝ արտադրական և սոհմական նպատակով ոգտագործելու համար.

ե) հետագա աճեցման և վորպես մասցու՝ բուժման համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Տվյալ կոլտնտեսության արուհորթերի և ցուլիկների պահանջը (կեա ա, բ, գ, դ) լրիվ բավարարելուց հետո, ավելցուկ ցուլիկները, վորոնք լծկան գաճախու համար պիտանի յեն, պետք է փոխանակվեն մասցու անասուններով այն կոլտնտեսությունների հետ, վորոնք քաշող ուժի պակաս ունեն:

6. Սոտանման յենթակա յեն՝

ա) այն կովերը, վորոնք՝

1) կորցրել են յերկու գույգ կտրիչ ատամները.

2) փչացել են (քուացել են) 2—3 պտուկները.

3) յերկու աչքերն են կուրացել են.

4) յերկու տարի անընդհատ ստերը են միում, յեթե միայն հաստատված է, վոր շարունակ ծածկված են յեղել:

5) մարսողության և շնչառության արգանքների խորնիկական և անբուժելի հիվանդություն ունեն, վորի հե-

տեանքով անասունը կորցնելու յե իր արտադրողականության հատկանիշները, կամ հյուծվելու վտանգ կա, վորպիսին կարող է տվյալ անասունի անկում առաջ բերել:

6) արտաքին կամ ներքին կյանքը վտանգող լուրջ, վերքեր են ստացել:

բ) ցուլերը, վորոնք՝

1) թոքախտի կամ ինֆեկցիոն վիժումի բացահայտ նշաններ ունեն:

2) լուրջ, կյանքը վտանգող, վերքեր են ստացել:

3) սեռական անկարողություն ունեն, յեթե միայն այդ հետեանք է որդանական ցավերի, և վոչ թե առաջ է յեկել վատ խնամքի, վատ պահպանման աւ վատ կերակրելու հետեանքով:

4) պակասավոր եքստերյեր (մարմնի կազմվածք), վոչ ցեղական և քիչ արտադրողականություն ունեցող ծնողներին սերված ցուլերը խոտանման պետք է յենթարկել այն դեպքում, յերբ անտեսությունը նրանց ավելի լավերով փոխարինելու հնարավորություն ունի և յուրաքանչյուր առանձին անգամ շրջնորթածնի թույլտվությունն ստացված է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Յերբ դեռևս ցուլերը տոհմային աշխատանքների համար պիտանի յեն, կտրականապես արգելվում է ծանր կենդանի քաշի և հասակի պատճառով նրանց խոտանելը:

զ) հորթերից պետք է խոտանել նրանց, վորոնք ֆիզիկական պակասություններ ունեն (այլանդակություն). մատղաշ անասուններից՝ նրանց, վորոնք կյանքը վտանգող վերքեր են ստացել:

7. Անասունների խոտանումը պետք է ձեռկերպել հասուկ արձանագրությամբ, վորպիսին ստորագրվում է կոլտնտեսության նախագահի կամ ֆերմայի վարիչի, գյուլխարհի ներկայացուցչի, ղոտեխնիկի և անասնաբուժի կամ անասնաբուժակի կողմից: Արձանագրության մեջ

պետք է նկարագրել յուրաքանչյուր խոտանված անասունը և ցույց տալ այն պատճառները, վորոնք հիմք են ծառայել յուրաքանչյուր գլխի խոտանման համար:

8. Բացի ընդհանուր ցուցակում գրանցումից, հիվանդ անասունների համար առանձին տեղեկանք է կազմվում, ուր պետք է ցույց տալ՝ յուրաքանչյուր անասունի համար առանձին, հիվանդություն ընդլթր, և յենթադա յե նա բուժման մեկուսարանում, թե քնալու յե ընդհանուր նախրում:

9. Նախրի ստուգատեսի և խոտանումից հետո, հանձնաժողովը պարտավոր է ամբողջ նախիրը՝ համաձայն տեղի, սարիքի, տոհմային հատկանիշների և արտադրական ցուցանիշների, խմբերի բաժանել: Պետք է անասունները տեղավորել շենքերում, ամբողջենով յուրաքանչյուր անասունին իր վորոշ և մշտական տեղը: Ցուլերը պետք է տեղավորել կովերի հետ մի ընդհանուր գոմում, հասուկ նրանց համար պատրաստած տեղերում:

10. Մեկ հասակի խմբից մյուսը փոխանցելը, անասունների վորոշ մասի խոտանելը և ալին, ֆերման սպասարկող կոլտնտեսականներին ամբացրած անասունների մասնակի վերաբաշխում է պահանջում: Այդպիսի վերաբաշխումը և ամբացումը պետք է կատարվի հասուկ հանձնաժողովի կողմից՝ անասունների ստուգատեսի և նրանց գոմերում տեղավորելուն զուգընթաց:

11. Այն անասունները, վորոնք չեն համարակալված, պետք է համարակալել:

IV. ԿԵՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՅԵՎ ԾԱԽՍՈՒՄԸ

1. Պետք է կերակրման աժողովոն կերաբաժինների կազմել: Կերաբաժիններ վորոշելիս յելուկեա պետք է ունենալ անասունի կենդանի քաշը և նրա արտադրողականությունը, ինչպես նաև կոլտնտեսության կերային հնարավորությունները: Ամսական կերաբաժինները կոլտնտես-

առաջնության վարչություն կողմից անպատճառ պետք է հաստատված լինեն:

2. Կոլտնտվարչության կողմից հաստատված ամսական կերաբաժինների և տավարի յենթադրվելիք քանակի հիման վրա պետք է հաշվի առնել, թե մինչև նոր բերքը ֆերմայի անասունների համար վորքան կեր է պահանջվում:

3. Կոլտնտվարչության կողմից կերերի բաշխման և ֆերմայի համար կերի ֆոնդ առանձնացնելիս, ֆերմայի վարիչն իր տրամադրության տակ է ընդունում ֆերմայի համար առանձնացված կերը: Կերն ընդունելիս հատուկ աջանագրություն է կազմվում, ուր պետք է ցույց տալ տեսակը, քանակը, վորակը, պահպանման տեղը և հանձնման ժամկետը:

4. Կերերի ճիշտ ոգտագործման և պաշտպանման պատասխանատվությունն ընկնում է ֆերմայի վարիչի վրա: Կերերի ծախսման և պաշտպանման վրա պատշաճ հսկողությունը ղեկավարացնող և վոչ մի հանգամանք չի կարող վերացնել ֆերմայի վարիչի վրայից նրա վրա դրած պատասխանատվությունը և կերի ամեն մի փչացումը, գողացումը և անփուլթ ծախսումը կհամարվի վորպես համայնական գույքի հափշտակում և կպատժվի 1932 թ. ոգոտտաի 7-ի որենքի ամբողջ խնտությունը:

5. Կերի ծախսումը պետք է կատարվի կայուն կերպով սահմանած որացուցային ամսական պլանի և կերաբաժինների հոմաձայն:

6. Որացուցային պլանում պետք է նախատեսել շուտ փչացող կերերի առաջին հերթին ոգտագործումը: Հյուլթալից կերերից առաջին հերթին պետք է կերակրել տյալիսի կերերով, ինչպես որինակ դդումն է: Պլանում պետք է նախատեսել, վոր լավագույն կերերը պետք է տրվեն հղի կովերին հղիության լերկորդ շրջանում և մինչև մեկ տարեկան հասակ ունեցող մատղաշներին, ինչպես նաև ցուրերին:

7. Կերի ծախսման պլանը պետք է կազմել 2 որինալից, վորից մեկը պետք է գտնվի ֆերմայի վարիչի մոտ, մյուսը կոլտնտվարչության գրասենյակում:

8. Կերերի ծախսման հաշվառումը ֆերմայի վարիչն է տանում համաձայն ծախքի որդերներին: ամսվա վերջին ալ որդերներն ընդհանրացվում են կերերի շարժման տեալդ որդերներն ընդհանրացվում է կոլտնտվարչության: դակագրով, վորը և ներակայացվում է կոլտնտվարչության:

9. Սյն ֆերմաներում, ուր 300 գլխից ավելի տավար կա, հնարավոր է ֆերման սպասարկող բրիգադից հատուկ տահետապետ առանձնացնել, վորի վրա է պետք է դնել կեստապետ առանձնացնել, վորի վրա է պետք է դնել կերը բաց թողնելու և հաշվառման պարտականությունները:

10. Մինչ աշնան անձրևների հետևանքով ճանապարհների փչանալը, ամբողջ կերի պաշարը պետք է փոխադրել և դեղել գոմերին մոտիկ:

V. ՏԱՎԱՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՄԲԸ

1. Անասունների արտալին խնամքից մտուբայինին փոխանցելը պետք է կատարել տատիհանաբար՝ կրճատելով արածեցնելու ժամերը և ավելացնելով գոմում արվող կերի չափը:

2. Պետք է կերակրել կերաբաժիններով համաձայն անասունի կենդանի քաշի և նրա արտադրողականության (կաթնատու անասունների համար՝ ըստ կթված կաթի քանակի, մատղաշների և բուվող անասունների համար՝ ըստ կենդանի քաշի աճի):

3. Անասունները պետք է բաժանել խմբերի ըստ արտադրողականության չափի և կենդանի քաշի: յուրաքանչյուր խմբի համար որական կերաբաժինների նորմաներ պետք է մշակել:

4. Ձմռով կերակրելու կազմակերպումը և խմբակային կերաբաժինների կազմելը պետք է դնել ֆերման սպասարկող տեխնիկ-անասնապահի և դոտեխնիկական պետոնալի վրա:

5. Անասուններին պետք է կերակրել որակաւ 2—3 անգամ, համաձայն ֆերմայի համար սահմանած որակ տեղքին կարգ ու կանոնի:

6. Կերակրելու հետեյալ կարգը պետք է սահմանել. առաջ պետք է տալ ուժեղ կերերը, ապա հյութալից և հետո կոպիտ կերերը: Յուրաքանչյուր առանձին տեսակի կերը պետք է տալ այն ժամանակ, յեր նախորդ կերն տնտեսունները կերել, վերջացրել են:

Կիթի միջոցին կեր չպետք է բաժանել:

7. Վոչ մի դեպքում չի թույլատրվում անասուններին առանց մաուրի կերակրելը:

8. Վորպեսզի անասուններն ավելի լավ յուրացնեն կոպիտ կերերը, ապուց առաջ պետք է կարտել կամ շոգեխաշ տնել:

9. Կերակրելուց առաջ արմատա-պալարապտուղները պետք է լվանալ և կտրտել:

10. Մինչև մեկ տարեկան հասակ ունեցող մատղաշներին ամենալավ, փափուկ և ժամանակին հավաքած կերք պետք է հաակացնել (առանձնապէս ոգտակար են թիթեռնածաղիկավոր բույսերը): Հորթերին դարման պետք է տալ 8—9 ամսական հասակ ունենալուց վոչ շուտ:

11. Պետք է աշաղիք կերպով հետեւել մատղաշների առողջական գրությանը, նրանց կենդանի քաշի հավելմանը. պարբերաբար նրանց պետք է կշռել (ամիսը մեկ տնգամից վոչ պակաս): Կշռը չունենալու դեպքում քաշը պետք է վորոշել չափումների միջոցով:

12. Խոտանման յենթարկված բոլոր անասունները, նախքան մորթվելը կամ մսամթերման հանձնվելը, պետք է բտման դնել:

13. Բաուժը պետք է կատարել խոտով և սիլոսով. իսկ այն վայրերում, ուր շաքարի, սպիրտահան, գարեջրի և այլ աննգամթերք վերամշակող գործարաններ կան, բաուժը

պետք է կազմակերպել այդ արտադրությունների հաս-
ցորդներով:

14. Բաւման տեղությունը պետք է լինի՝ հասակա-
վայր անասունների համար 80—90 որ, իսկ մատղաշներին՝
90—100 որ:

15. Անասունները պետք է դասավորել խմբերի՝ ընդ-
դրկելով յուրաքանչյուր խմբի մեջ միանման կենդանի քաշ
ունեցող անասուններ. յուրաքանչյուր խմբի մեջ պետք է
ընդգրկել այնքան տնտսուն, վորքան պետք է խնամի մեկ
տավարապահ՝ համաձայն աշխատանքի կազմակերպման
նորմաների:

16. Բաւման դրած անասունների յուրաքանչյուր խմ-
բին առանձին—բաւման տեղության ամբողջ ժամանակա-
միջոցի համար—կենդանի քաշի հավելման ընդհանուր տ-
նջադրանք պետք է տալ Բաւման ժամանակամիջոցում
հասակավոր տավարը 15—20% հավելում պետք է առ,
իսկ մատղաշները՝ 20—30%: Նախքան բաւման դնելը պետք
է վորոշել անասունների նախնական կենդանի քաշը. կեն-
դանի քաշը պետք է վորոշել կշռելով կամ չափումները
միջոցով:

17. Մաււրային շրջանի համար որվա կայուն կարգ
ու կանոն պետք է սահմանել, վորպիսին քննվում է
արտադրական խորհրդակցությունում և հաստատվում կոլ-
տնտվարչության կողմից:

Օրվա որինակելի կարգ ու կանոն արգլումտու տնտսունների
ապաստակող աշխատողների համար

1. Տավարի տակը մաքրելը և գոմաղը շուրս տա-
նելը առավ. ժամի 3—4 ժ.

2. Առավոտյան կիթ առավ. ժամի 4—5 1/2.

3. Կերերի նախապատրաստումը առավ. ժ. 4—6.

4. Խոտացրած կերերի (որական կերաբաժնի 1/2-ը),
հյութալի կերերի (որական կերաբաժնի 1/2-ը), և կոշտ կե-
րերի (որական կերաբաժնի 1/3-ը) տալը առավ. ժ. 5 1/2—6 1/2.

5. Անասունների մաքրելը առավ. ժ. $6\frac{1}{2}$ — $7\frac{1}{2}$
6. Ջրելը և զբոսանքը առավ. ժ. 8—9.
7. Գոմաղբի գոմից դուրս տանելը, ցամաքաբի փոխելը և կոպիտ կերի (որական կերաբաժնի $\frac{1}{3}$ մասը) տալը ցեր. ժ. 8—11.
8. Յերկրորդ կիթը (յեթե այդ կիրառվում է) ցեր. ժ. — 12—13.
9. Գոմի մաքրելը, գոմաղբի դուրս տանելը և անասունների ջրելը ցեր. ժ. $16\frac{1}{2}$ — $17\frac{1}{2}$
10. Որական կերաբաժնի խտացրած կերի մնացած $\frac{1}{2}$ մասի և հյութալից կերի մնացած $\frac{1}{2}$ մասի տալը յերեկ. $17\frac{1}{2}$ — $18\frac{1}{2}$.
11. Յերկրորդ կիթը յերեկ. 19—20.
12. Կոպիտ կերի մնացած $\frac{1}{2}$ մասի տալը յեր. 20—21.
- ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Որական միայն յերեկու առավոտ կիթելիս յերեկոյան կիթը պետք է ավելի վաղ՝ ցերեկվա ժամի $16\frac{1}{2}$ -ից $17\frac{1}{2}$ -ը կատարել

Որվա կարգ ու կանոն հաքսնացում

1. Հորթանոցի մաքրելը և ցամաքաբի փոխելը առավ. ժ. $3\frac{1}{2}$ — $4\frac{1}{2}$.
2. Առաջին կերակրումը—բոլոր հորթերի առավ. ժ. $4\frac{1}{2}$ — $5\frac{1}{2}$.
3. Հորթերին զբոսանքի հանելը 10— $11\frac{1}{2}$.
4. Հորթերի մաքրելը և աղտոտած տեղերի վանալը ցերեկ. ժ. $11\frac{1}{2}$ — $12\frac{1}{2}$.
5. Յերկրորդ կերակրումը $12\frac{1}{2}$ — $13\frac{1}{2}$.
6. Հորթանոցի մաքրելը և ցամաքաբի փոխելը յերեկ. ժ. 18— $19\frac{1}{2}$.
7. Յերկրորդ կերակրումը $19\frac{1}{2}$ — $20\frac{1}{2}$.
- Յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հորթանոցի վանդակները և հատակը պետք է վանալ:
18. Գոմում խոնավություն չպետք է լինի, վորի համար և չի թույլատրվում անասուններին ջրելիս գոմում ջուր թափելը, գոմում տեղավորված ջրով լիքը առկառները կամ

ջրամբարներն առանց կափարիչի պահելը: Ջրի տաքացնելը, կերերի շոգեխաշ անելը պետք է կատարել կերի շաժանմունքում, վորը պետք է ապահովված լինի լավ գործող ողանցքով:

19. Յեթե գոմում խոնավություն կա, ապա հատակին ավաղ կամ փայտի թեփ պետք է շաղ տալ:

20. Վոչ մի դեպքում չի թույլատրվում գոմում գոմաղբի կուտակումը: Գոմերը գոմաղբից պետք է մաքրել որակյան 2 անգամ և անմիջապես գոմաղբանոց փոխադրել:

21. Ցամաքաբը պետք է փոփոխել որական 2 անգամ, ինչպես գոմում, նույնպես և հորթանոցում և ծննդաբախում: Ցամաքաբը պետք է լինի լավորակ, վոչ փթած և չոր: Միջին հաշվով յուրաքանչյուր գլխին որական պետք է ցամաքաբ տալ՝ հասակավոր անասուններին—2 կիլոգ., մատղաշներին—մինչ 1 տարեկան հասակը—1 կիլոգ., 1-ից բարձր հասակ ունեցողներին՝ $1\frac{1}{2}$ կիլոգրամ:

22. Անասուններին որական 2—3 ժամ զբոսանքի պետք է հանել: Ցուրտ որերին զբոսանքի հանել չի կարելի:

23. Անասուններին ամեն օր խողանակով կամ խոտի փնջով պետք է մաքրել:

24. Տավարին պետք է ջրել գոմում: Դուրսը ջրելու բշելը, մանավանդ հզի կովերին (ծնելուց առաջ՝ վերջին 60 օրը), կտրականապես արգելվում է: Պետք է ջրել որական 2 անգամ: Ջրի ջերմութունը գոմի ջերմության աստիճանին հավասար պետք է լինի:

VI. ԲԵՂՄԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ֆերմայի նախրի մայրական կազմի խոտանումից հետո, պետք է վորոշել հաջորդ տարվա ընթացքում զուգավորման գնացող անասունների քանակը և կազմը:

2. Զուգավորման յենթակա մայրերի կազմի մեջ են մանելու բոլոր կովերը, յերինջները և 1—2 տարեկան հասակ ունեցող այն յերինջները, վորոնք զուգավորման համար հասունացած են:

Հրահանգ տավարան



ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

3. Զուգավորման յենթակա մայրերի քանակին համապատասխան արտադրող ցուլեր պետք է ունենալ այն հաշվով, վոր՝ ձեռնաքաշ զուգավորում կիրառելու դեպքում, յուրաքանչյուր 40-ից 50 կովի ու յերինջի համար մեկ հասակավոր ցուլ հասնի: Այն ֆերմաները, վորոնք 40 գլխից պակաս կով ունեն, նրանք կա պարտավոր են ցուլ ունենալ:

4. Յուլերի պահանջվող քանակը վորոշելիս, պետք է հաշվի առնել նաև կոլտնտեսական-գյուղացիական պահանջը ևս (ԿԱՖ-ից դուրս յեղած համայնացրած հոտը, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների նախիրը), վորոնց սպասարկումը պետք է կատարել ֆերմայի ցուլերով:

5. Յուլերի պահանջը վորոշելիս, պետք է վերստուգման յենթարկել ֆերմայի բոլոր ցուլերը և բեղմնավորելու վոչ պիտանի ցուլերին դուրս հանել արտադրողների կազմից: Բեղմնավորման համար ընտրած և առանձնացրած ցուլերի ցեղը պետք է համապատասխանի տվյալ շրջանի համար տավարի ցեղական շրջանացմամբ՝ նախատեսված ցեղին: Յերը պլանային ցեղին պատկանող ցուլերը քիչ են, պակասը պետք է լրացնել տեղական ցեղին պատկանող լավագույն արտադրողներով:

6. Բեղմնավորելու պիտանի ցուլերի ընտրությունը կատարելուց հետո, անհրաժեշտ է վորոշել ընտրված ցուլերի վորակական ցուցանիշները, վորի համար հիմք պետք է ծառայեն նրանց ծագման և ծնողների արտադրողականության չափի մասին յեղած տեղեկությունները: Ամեն մի ցուլին պետք է ամրացնել կովերի վորոշ խումբ. լավագույն ցուլին պետք է ամրացնել նախրի մեջ յեղած լավագույն կովերը: Յուրաքանչյուր ցուլին ամրացրած կովերի ցուցակը պետք է փակցնել գոմի պատին:

7. Ֆերմայում առանց հատուկ նպատակադրման և վոչ մի ցուլ չպետք է լինի. դրա համար ֆերմայում յե-

ղած վեց ամսական հասակին հասած յուրաքանչյուր ցուլիկ պետք է իր հետագա նպատակային վորոշումն ստանա: Պետք է նախորոշել՝ նա պետք է թողնվի տոհմական նպատակների համար, վորպես ապագա արտադրող, թե ամորձատվելու յե և գնալու բոման կամ թե մեծացվելու յե՝ բանող յեղ դառնալու համար, վորի համար նախորդ ստանալ հողբաժնի թույլտվությունը:

8. Յուրաքանչյուր գոմի համար առանձին բեղմնավորման պլան պետք է կազմել և կովերի զուգավորումը կատարել համաձայն այդ պլանի:

9. Զուգավորման գործի ամենակարևոր մոմենտներից է բեղմնավորման հաշվառման և զրանցման գործի կազմակերպումն ու կիրառումը: Կովերին իր ժամանակին ցամաքեցնելը, իր ժամանակին ել ծինին նախապատրաստելը և նորածին հորթերի համար ել համապատասխան նախապատրաստական միջոցառումների ձեռնարկումը, կախված է բեղմնավորման ժամանակին և ճիշտ հաշվառումից:

10. Բոլոր կովերի և բեղմնավորվելու հասակ ունեցող յերինջների ժամանակին և լրիվ կերպով բեղմնավորելուց ե կախված կոլտնտեսության նախրի վերարտադրման տեմպերը: Բեղմնավորման հաջող ընթացքի պատասխանատվությունը, ամբողջ ֆերմայի նկատմամբ, դրվում է ֆերմայի վարիչի վրա, իսկ յուրաքանչյուր տավարապահին՝ ամրացրած կովերի նկատմամբ՝ տավարապահի վրա:

VII. ՇՂԻ ԿՈՎԻ ԽՆԱՍՔԸ

1. Կոլտնտ. ֆերմաներում հղի կովերի խնամքն ու պահպանումն այնպես պետք է կազմակերպել և տանել, վորպեսզի ապահովված լինի բոլոր կովերի նորմալ ծինը:

Վիժման յուրաքանչյուր դեպքը պետք է մանրակրկիտ կերպով քննության յենթարկվի: Յեթե կհաստատվի, վոր վիժման պատճառը անփութ լիամ չարամիտ վերաբերմունք ունենալն է, այդ դեպքում՝ հանցավորները, վորպես հասա-

բակական դուշը հափշտակողներ՝ ամենախիստ պատասխանատվութեան պետք է կանչվեն:

2. Հղի կովի խնամքի կազմակերպման հիմնական կանոնները պետք է լինեն՝

ա) Համաձայն բեղմնավորման զբանցումների՝ բրիգադերը և տեխնիկ-անասնապահը վորոշում են յուրաքանչյուր կովի ցամաքեցնելու (կաթից կտրելու) ժամանակը (ծնելուց 40—60 օր առաջ):

Կթողը պարտավոր է հետևել կովերի, հատկապես բեղմնավորվելու օրն անհայտ կովերի, զրուծյաճի:

բ) Կաթից կտրելու հաշվառումը և կոնտրոլը պետք է կատարել նույն ճշտութեամբ, ինչպիսին կիրառվում է բեղմնավորման նկատմամբ:

գ) Ցամաքած կովերին մուրալային խնամքի փոխադրելիս, նրանց պետք է կապել նրանց համար հատկացրած մշտական տեղում: Յերբեք չի թույլատրվում ցամաքած կովերին առանձին խմբում առանձնացնելը և նրանց առանց կապելու գոմում տեղավորելը:

դ) Հղի կովին պետք է խնամի նույն կթող-տավաբապահը, վորը նրան կթել է:

ե) Հղի կովերին զբոսանքի պետք է թողնել ընդհանուր նախքից առանձին:

զ) Ծնելուց տասն օր առաջ և տասն օր էլ հետո հղի կովին զբոսանքի չպետք է թողնել:

Հղի կովերին (հղիութեան վերջին 3 ամիսը), վորպես կանոն պետք է լավորակ կերերով կերակրել (լավորակ խոտ, արմատապտուղներ և խտացրած կերեր):

Հղի կովերին, մանավանդ հղիութեան վերջին շրջանում, չի կարելի բորբոսնած, ցրտահարված և տաք կեր, հնչպես նաև ծլած կարտոֆիլ տալ:

ը) Հղի կովերին հղիութեան յերկրորդ կիսում (վերջին 120 օրը), բացի կենսապահ կերից, անհրաժեշտ է լրացուցիչ 0,8—1,2 կիլոգրամ խտացրած կեր տալ: Ջա-

հել հղի կովերի համար այդ հավելյալ կերը պետք է կրկնապատկել:

Ստացրած կերի բացակայութեան դեպքում, հղիութեան համար տրվող լրացուցիչ կերը պետք է փոխարինվի տրվող խոտի քանակի ավելցմամբ: 300 կիլոգր. միջին կենդանի քաշ ունեցող կովին այդ ժամանակամիջոցում օրական 8—10 կիլոգրամ միջին վորակի խոտ պետք է տալ: Հղի չկթվող կովերին միայն դարմանով կերակրելն արգելվում է:

թ) Հղի կովի կերաբաժնի մեջ անհրաժեշտ է ամեն օր 100 գրամ հանքային աղեր ավելացնել, վորպիսին պետք է բաղկացած լինի կավիճի ալյուրի, սեղանի աղի և ֆոսֆորաթթվային կամ վոսկրի ալյուրի հավասարաչափ խառնուրդից: Հանքային աղերը պետք է տալ ուժեղ կերերի հետ խառը, իսկ յեթե ուժեղ կերը բացակայում է, կոպիտ կերերի հետ:

ժ) Հղիութեան վերջին շրջանում կովերին անպատճառ պետք է ներսը ջրել, դրսում ջրելը կտրականապես արգելվում է:

ի) Ծնելուց 5—7 օր առաջ հղի կովին պետք է փոխադրել ծննդարան: Յեթե հատուկ ծննդարան չկա, այդ դեպքում ընդհանուր գոմի մի մասը պետք է միջնապատով առանձնացնել և այն հարմարեցնել ծննդարանի համար:

լ) Ծննդարանը, կամ այդ նպատակի համար հարմարեցրած գոմի մասը, պետք է լինի լուսավոր, չոր, մաքուր և քամիներից զերծ:

խ) Ծննդարանում տավարապահների կամ սանիտարների ցերեկվա և գիշերվա անընդհատ հերթապահութուն պետք է լինի:

3. Յեթե նորածին հորթերին հատկացրած բաժինը ծննդարանի հետ միասին մի ընդհանուր ծածկի տակ չի գտնվում, այդ դեպքում նորածին հորթին հորթանոցից ծննդարան փոխադրելու համար, տաք պատգարակ պետք

ե պատրաստել: Հիվանդ հորթերի համար հատուկ մեկուսարան պետք է ունենալ:

Հօրթերի խնամքը, պահպանումը յեվ կերակրումը պետք է կատարել համաձայն ՀՍԽՀ Հողօգոյկումատի կողմից հրատարակած հրահանգի:

VIII. ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Նախքան մսուրային խնամքին անցնելը, անասնաբուժական կազմի կողմից անասունները պետք է քննության յենթարկվեն պարզելու համար՝ չկան արդյոք թուրքախտավորներ (տուբերկուլինիզացիա): Սիբիրական տխուր վտանգված վայրերում հակասիբիրախտի սրսկումները պետք է կատարել:

2. Հիվանդ անասունները, հավասարապես նաև վարակիչ հիվանդությամբ կառկածները, պետք է փոխադրվեն մեկուսարան: Այդպիսի անասունին գոմից դուրս հանելուց հետո, նրա կապած տեղը ախտահանման պետք է յենթարկել:

3. Մեկուսարանը պետք է կազմակերպել ֆերմայի մոտցած շենքերից 150—200 մետրից փոշ պակաս հեռու ընկած մի առանձին շենքում:

4. Հիվանդ և վարակիչ հիվանդությամբ կառկածներ խնամողները պետք է առանձին լինեն, ինչպես նաև առանձին պետք է լինի նրանց ջրելու տեղը և սպասարկման համար անհրաժեշտ պիտույքները:

5. Պետք է արգելել ֆերման սպասարկող անձնակազմի հաճախումը վարակիչ հիվանդություններով վտանգված տնտեսությունները, ինչպես նաև պետք է կտրականապես արգելել մասնավոր անձանց մուտքը ֆերմայի գոմերը:

6. Չպետք է թույլ տալ, փոր մի տնտեսության անասունները խառնվեն ուրիշ տնտեսության անասուններին:

7. Ֆերմայի մոտով անցնող և ընդհանուր կողմից

ողտազործելի ճանապարհները պետք է փակել ու սահմանել շրջապատում ճանապարհ:

8. Ներս մանելիս վտանամաններն ախտահանելու համար, գոմի և հորթանոցի դռան մոտ ախտահանող լուծույթի պարունակությամբ մի լայնաբերան աման պետք է դնել:

9. Անասնաբույժները պետք է մաքուր լինեն: Գոմաղբը՝ մաքրելուց հետո, այն անմիջապես գոմաղբանոց պետք է փոխադրվի: Վարակիչ հիվանդությունների (սիբիրախտ և այլն) դեպքում գոմաղբը պետք է այրել:

10. Առաջին ոգնությունը ցույց տալու համար գոմերը պետք է ապահովված լինեն տնային ապրեկանքով և շարժական գործիքներով (նամարխի բաժակ, ջերմաչափ, կուպերի մկրատը, կատետը՝ կթող խողովակներ և այլն):

11. Անասուններ զնելիս, մինչ անտեսություն մտցնելը, նրանք յերեքշաբթյա կարանտինի պետք է յենթարկվեն: Վարակիչ հիվանդությունների տեսակետից բարենպաստ շրջաններից ներմուծվող անասուններն անասնաբուժից համապատասխան վկայականներ պետք է ունենան:

12. Շենքերի ախտահանումը տարեկան յերկու անգամ պետք է կատարել՝ աշնանը և գարնանը: Վարակիչ հիվանդությունների առկայության դեպքում՝ անասունին մեկուսարան տանելուց անմիջապես հետո, ախտահանում պետք է կատարել: Անասնաբուժական կազմի ցուցմունքների համաձայն, ախտահանման պետք է յենթարկել կամ անասունի կապած տեղը կամ ամբողջ գոմը:

IX. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Արոտայինից մսուրային խնամքին անցնելիս, անասունների խնամքի մեջ դիմադրկություն չստեղծելու համար, անհրաժեշտ է հետևյալ պայմանները պաշտպանել՝ ա) մսուրային շրջանում ֆերմայում պետք է աշխատ-

տեն նույն աշխատողները, վորոնք սպասարկել են ֆերման արոտային խնամքի միջոցին:

բ) յուրաքանչյուր բրիգադ, կոլտնտեսուհի և կոլտնտեսական մասերային շրջանում պետք է սպասարկի անասունների հենց այն խումբը, վորին խնամել է արոտային շրջանում:

2. Յեկնելով տեղական պայմաններից, ձմեռվա ընթացքում ֆերմայում աշխատողների ավելի պահանջ է լինում, քան թե ամառային արոտի խնամքի միջոցին: Այդ դեպքում ֆերման սպասարկող բրիգադն առաջին հերթին պետք է լրացվի այն կոլտնտեսականներով, վորոնք անցյալ մասերային շրջանում ֆերմայում են աշխատել, ընդ-վորում՝ յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է աշխատի այն բրիգադում, ուր նա աշխատել է անցյալում: Արոտայինից մասերային խնամքին անցնելիս, ինչպես որենք, բոլոր նախրապահները պետք է աշխատեն վորպես տավարապահներ:

3. ԿԱՖ-ի պրակտիկայում պատահում են այնպիսի դեպքեր, յերբ մի բրիգադը 400—500 գլուխ (մոտ կեսը կովեր) անասուն է սպասարկում: Բրիգադի այդպիսի չափը դժվարացնում է ղեկավարությունը և աշխատանքի վորակի անկում է առաջ բերում:

Հակառակ ծայրահեղությունն էլ այն է, վոր յուրաքանչյուր 50—60 գլուխ անասունի համար առանձին բրիգադ է կազմվում իր բրիգադիրով: Այս հանգամանքը բարձրացնում է կոլտնտեսության վարչատնտեսական ծախքերը:

Լավագույն ֆերմաների վործը ցույց է տալիս, վոր ամենանպատակահարմարն այն է, յերբ բրիգադը կազմվում է այնպիսի հաշվով, վոր նա սպասարկի 100 կով և մինչև վեց ամսական հասակ ունեցող բոլոր հորթերը: Յուրաքանչյուր այդպիսի մի բրիգադ պետք է ունենա իր բրիգադիրը:

4. Յուրաքանչյուր կոլտնտեսուհի և կոլտնտեսական, բացի կովերի և մատղաշների տավարապահներից, մասերային շրջանում պետք է այնքան անասուն խնամի, վորքան նա սպասարկել է արոտային շրջանում: Կովերը պահող տավարապահի համար բեռնվածության որոշանալի չափ կարող է լինել 50 գլուխը, իսկ մատղաշներ պահողի համար՝ 30 գլուխը:

5. Կաթնատու անասուններին սպասարկող բոլոր կոլտնտեսականների համար արտադրական նորմաները պետք է սահմանել կաթի լիտրներով ըստ յուրաքանչյուր ամսի: Յեթե, մեկը մյուսի համեմատությամբ, ամիսների կիթի մեջ աննշան տարբերություն կա, այդ դեպքում արտադրական նորմաները կարելի է մշակել ամբողջ կվարտալի համար:

Մատղաշ և մասցու անասուններին սպասարկող կոլտնտեսականների համար արտադրական նորմաներ պետք է մշակել ամբողջ մասերային շրջանի համար ըստ կենդանի քաշի աճի—կիլոգրամներով, կամ գլուխներով, անշուշտ հաշվի առնելով անասունների գիրությունն նախնական դրությունը:

6. ՀՄՈՀ Հողժողկոմատի կոլեգիայի 1933 թ. ապրիլի 11-ի վորոշման համաձայն՝ «գյուղատնտեսական զանազան աշխատանքների գնահատումը կոլտնտեսություններում», ֆերմայում աշխատող կոլտնտեսականների աշխատանքի գնահատումը աշխուրհերով հետևյալ որոշմամբ ձևով պետք է կատարել.

ա) ֆերմայի վարիչը, վորը մեկ տարուց ավել է ֆերմայում աշխատում, նրա աշխատանքը պետք է գնահատվի 5-րդ կարգով՝ 1,5 աշխուրով: Յեթե նա առաջին տարին է աշխատում ֆերմայում, գնահատվում է 4-րդ կարգով—1,25 աշխուրով: 4-րդ կարգով պետք է գնահատվի նաև ավագ նախրապահի աշխատանքը:

բ) տավարապահ-կիթողի, հորթապահի, կաթնատնտեսի աշխատանքը, վորոնք ֆերմայում աշխատում են յերկրորդ

տարին, այլ և նախարարականների աշխատանքը, որվա արտադրական նորման նրանց կողմից կատարելու դեպքում, գնահատվում է 3-րդ կարգով—1,0 աշխուրով:

Առաջին տարին աշխատող տավարապահ-կթողը, հորթապահը և կաթնատնտեսը, վորոնք ֆերմայում առաջին տարին են աշխատում, նրանց աշխատանքը գնահատվում է 2-րդ կարգով—0,75 աշխուրով: Յերկրորդ խմբին է պատկանում նաև տավարապահի աշխատանքը:

7. Ֆերման սպասարկող յուրաքանչյուր բրիգադի և առանձին կուտնտեսականի համար ամսական արտադրական առաջադրանքներ պետք է սահմանել: Այդ առաջադրանքի մեջ պետք է ցույց տալ, թե յուրաքանչյուր կուտնտեսականի վորքան արտադրանք պետք է տա և այդ առաջադրանքը կատարելու դեպքում վորքան աշխուր պետք է հատկացվի նրան: Յեղնելով դրանից—արտադրանքի յուրաքանչյուր միավորի համար աշխուրերով գործարքային գնահատում պետք է սահմանել: Որինակ, յեթե տավարապահ-կթողին ամսական առաջադրանք է սահմանված 1500 լիտր կաթ, վորի համար նրան հատկացվելու յե 30 աշխուր (յեթե նա յերկրորդ տարին է ֆերմայում աշխատում), ապա կթված յուրաքանչյուր լիտրը կաթի համար նրան հասնում է 0,02 աշխուր: Ամեն օր—որական առաջադրանքը (50 լիտր) կատարելով, կթող անառնապահը կստանա 1 աշխուր: Նույն ձևով ել մյուս աշխատանքների համար է գործարքային գնահատում սահմանվում և ըստ այնմ ել աշխուրերի հատկացումը կատարվում:

8. Այն ֆերմայում, ուր դժվար է կազմակերպել հորթերի կենդանի քաշի աճի կանոնավոր հաշվառումը, այդ դեպքում կարելի յե գործարքը կիրառել ըստ հորթերի քանակի, անշուշտ նախապես համաձայնեցնելով շրջնողաթնի հետ և հաշվի առնելով անպայման հորթի չաղությունը: Որինակ, յեթե հորթապահը յերկրորդ տարին է, վոր աշ-

խատում է ֆերմայում և սպասարկում է 20 հորթ, ապա յուրաքանչյուր հորթին մեկ ամիս խնամելու համար, յեթե նա նորմալ չաղություն ունի, հորթապահին պետք է որական հատկացնել 1,5 աշխուր, իսկ մեկ ամսում նրան հատկացրած աշխուրերի քանակը լինի 30 աշխուր:

Ֆերմաներում կթողներին և կթող-տավարապահին պետք է հանձնել նաև իրենց հանձնված կովերի հորթերի խնամքը՝ վոչ միայն ձմեռը, այլ և ամառվա շրջանում: Այդ աշխատանքի կատարման համար նրանց անհրաժեշտ է լրացուցիչ աշխուրեր հատկացնել:

9. Ֆերմայում աշխատող կուտնտեսականների աշխուրերի հատկացումը պետք է կատարել յուրաքանչյուր ամսի վերջին, ըստ վորում, նայած թե կուտնտեսականին ամբողջած անասունները ինչ գրության են, ինչ չաղության, և ինչպես են կատարված կաթի արտադրական առաջադրանքների նորմաները, ըստ այնմ ել նրա աշխատած աշխուրերի 20%-ի սահմաններում աշխուրերի լրացուցիչ հատկացում կամ պակասեցում է կատարվում:

10. Լավ աշխատանքի համար պարգևատրման և վատ աշխատանքի համար՝ տուժի կարգ և նորմաներ պետք է ունենա յուրաքանչյուր կուտնտեսություն: Այդ կարգը և նորմաները պետք է մշակված լինեն արտադրական խորհրդակցության կողմից և հաստատված կուտնտավարչության և կուտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից: Պարգևատրումը պետք է կատարել հորթերով, գրամով, արգյունաբերական ապրանքներով և այլն: Հորթերով պարգևատրումը պետք է կատարել համաձայն ՀՍՍՀ Հողփող կոմատի կողմից 1933 թ. ապրիլի 11-ի վորոշման:

ՀՍՍՀ Հողագործության ժողովրդական կոմիտեի և կոլեգիայի 11 ապրիլի 1933 թ. վորոշումից.

«Կոլխոզային տնտեսագետական տարաճային ֆերմաների մատակարարի անցմանն սպասարկող կոլեկտիվներին դրամով յեկ նախաճառով պարգևատրելու մասին.

Առաջադրանքային ֆերմաների մատակարարների աճեցման

գործում կոլտնտեսականների շահագրգռվածությունն էլ ավելի բարձրացնելու նպատակով, սահմանել զլ առավ և նստաւրայով պարգևատրելու համար հետեյալ օրինակելի կարգը.—

1. Խոհար յեղջուրավօր անասնապահական ճեմաները

1. Ապրանքալին ֆերմաներում յեղած յուրաքանչյուր 100 գլուխ կովերից և յերինջներից սահմանել 75 գլուխ 6 ամսական հասակի մատղաշներ ստանալու նորմա:

2. Սուաջին կեսում նախատեսված 100 գլուխ կովերից և յերինջներից ստացվելիք հորթերի տարեկան քանակից ավել անցրած բոլոր հորթերը պետք է ոգտագործել ֆերման սպասարկող լավագույն հարվածայիններին պարգևատրելու համար:

3. Պարգևատրումը պետք է կատարել այնպիսի հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր պարգևատրվող կոլտնտեսական ամբողջ տարվա ընթացքում 1—2 հորթից ավել չստանա:

4. Զուգավորելու և հաջող ծնեցնելու համար նստաւրայով պարգևատրելուն զուգընթաց սահմանել նաև դրամական հետեյալ վճարումները.—

Նորմայից ավել զուգավորած և հաջող ծնեցրած յուրաքանչյուր կովի համար տավարապահին և նախրապահին՝ 5 ուրլի, իսկ ցուլապահին՝ 1 ուրլի, ըստ վորում, այդ գումարի 25% -ը վճարվում է զուգավորելու ժամանակ, մնացած 75% -ը հաջող կերպով ծնեցնելուց հետո:

ՅԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1. Յեթև անասունները խնամում է կթողը, այդ պարգևատրումն ստանում է կթող-անասնապահը:

2. Անասնապահին և նախրապահին տրվելիք 5 ուրլին պետք է հաժսոր կիսել նրանց մեջ:

ՀԱՅԿ ՀԱՊԺՈՂԿԱԾՈՒՄԻ ԿՈՒԼԵԳԻԱՅԻ 1933 թ. հունիսի 25-ի վարչության

Ժ լրումն ՀՍԽՀ Հողօրդկումատի կոլեգիայի ս. թ. ապ-

րիլի 11-ի— մատղաշների անցման համար կոլտնտեսականներին բնանյութով և դրամով պարգևատրման մասին յեղած վորոշման, ֆերմաներում մատղաշների սատկումների դիմաց սահմանել տուժի հետեյալ չափանիշները.

1. Մինչև 3 ամսական հասակ ունեցող սուաջին ստակած հորթի դիմաց—այն կոլտնտեսականից, վորի հանցանքով սատկումը տեղի յե ունեցել, նրան հասանելիք աշխուրդ քանակից պակսեցնել մինչև 5 աշխուր (տուժ), որերի քանակից պակսեցնել մինչև 8 աշխուր. ութ յերկրորդ ստակած հորթի դիմաց՝ մինչև 8 աշխուր. ութ ամսականից վեր հասակ ունեցող ստակած յուրաքանչյուր հորթի դիմաց սահմանել տուժ վոչ պակաս 15 աշխուրից:

12. Ֆերմայում ամուր կարգապահություն սահմանելու և ձրիակերների ու լողրերի դեմ պայքարելու նպատակով—համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի 1933 թ. հունվարի 30-ի վորոշման, աշխատանքային կարգապահությունը խախտողների նկատմամբ պետք է կիրառել ներազդման հետեյալ միջոցները՝ «վոչ հարգելի պատճառներով իրեն հանձնարարված աշխատանքից հրաժարվելու դեպքում, կոլտնտեսության վարչությունը պարտավոր է նրան մինչև 5 աշխուր տուժի յենթարկել, իսկ հրաժարվել կրկնվելու դեպքում՝ հեռացնել կոլտնտեսությունից»:

X. ՖԵՐՄԱՅԻ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՏԵՏԱԿԱՆԵՐԻՆ

Անհատական անասնապահության զարգացմանը նպաստելու համար ֆերմայի աշակցությունը պետք է կատարվի ֆերմայի անասնապահության զարգացման պլանների կատարումն ապահովելուց հետո— հետեյալ ձևով՝

ա) Համաձայն շրջանային կազմակերպությունների կողմից հաստատված ֆերմայի մատղաշներից վորոշ մասի վաճառման պլանի—նրանց վաճառելով կոլտնտեսականներին (սուաջին հերթին կովագուրկներին).

բ) ՀՍԽՀ Հողօրդկումատի կոլեգիայի 1933 թ. ապ-

բիլի 11-ի վորոշման համաձայն—մատղաշների պահպանման համար ընանյութով պարգևատրմամբ:

Բացի դրանից ֆերման պարտավոր ե՝

1) Ապահովել կոլտնտեսականների և աշխատավոր մեհառնտեսաների կովերի ժամանակին բեղմնավորումը.

2) Անասունները ճիշտ խնամելու, կերակրելու և հատկապես մատղաշների դաստիարակման և աճեցման գործում կոլտնտեսականներին և աշխատավոր մեհառնտեսաներին պարբերական ցուցմունքներ տալ.

3) Կովազուրկ կոլտնտեսականների համար հորթերի ընտրության և կոնտրակտացիայի յենթարկման, ինչպես նաև այդ հորթերի ճիշտ դաստիարակման գործի կազմակերպման աշխատանքներում ոգնություն ցույց տալ.

4) Մատղաշների տոհմային հատկանիշների վորոշման և նրանց տոհմային նպատակների համար զատելու, այլ և կոլտնտեսականների Քարձր արտադրողականություն ունեցող անասունների կոնտրոլ-արտադրական հաշվառման գործի կազմակերպման աշխատանքներում ոգնել կոլտնտեսականներին և այլն:



Պրեմիա կերաբաժիններ կարգադրող կովերի համար.

Կերերի տեսակները	Կենդանի քաշը կիլոգրամներով			
	300		400	
	Որական կիթը լիտրներով			
	3	6	3	6

Որական տրվելու յեն կեր կիլ.

1) Կերաբաժին սիլոսի յեվ արմատապտուղի խառնուրդով.

Խոտ	6,0	8,0	7,0	9,0
Արմատապտուղ	5,0	5,0	5,0	5,0
Սիլոս	10,0	10,0	10,0	10,0
Խառնուրդ կեր	—	0,8	0,5	1,0

2) Կերաբաժին սիլոսի խառն.

Խոտ	6,0	8,0	7,0	9,0
Դարման	4,0	4,0	4,0	4,0
Սիլոս	10,0	10,0	10,0	10,0
Խառնուրդ կերեր	—	0,5	—	1,0

Յեթե կոլտնտեսությունում հյուսիսային կերեր չկան, և միայն կոպիտ կերերով պետք է կերակրել, այդ դեպքում կարելի չէ հետևյալ կերաբաժինները կազմել.

3) Կերաբաժին առանց հյուսիսային կերերի.

Խոտ	6,0	8,0	8,0	9,0
Դարման	4,0	4,0	6,0	6,0
Խառնուրդ կեր	—	1,0	0,5	1,0

ՀՀ Ազգային գրադարան



NL0301142

21.304

9462 30 407.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



НХЗ ССРА—Агротехпроп и животноводственный сектор

Инструкция по подготовке товарных ферм
крупного рогатого скота к зимовке и стой-
ловому содержанию животных

СЕЛЬХОЗГИЗ

1934

ЭРИВАНЬ